



ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Չաքարիա Քանաքեռցին (Չաքարիա Սարկավազ) ծնվել է 1627թ. Քանաքեռում: Նրա հայրը՝ Մկրտիչը, եղել է Կոտայքի *ավագանու քարտուղարը*: Պատմագրի աշխատության մեջ սփռված կցկտուր անդրադարձներից հեղինակի անձի և նրա պատմագրական, եկեղեցական գործունեության մասին տեղեկանում ենք հետևյալը՝ 13 տարեկանից Չաքարիան որպես աշակերտ մուտք է գործել հայ գրչության և կրթության ժամանակի հանրահայտ վանական կենտրոններից մեկը՝ Օհանավանք, և այլևս մինչև իր կյանքի վերջին օրերը անխոնջ նվիրաբերվել վանական գործին: Այստեղ ձեռնադրվել է սարկավազ, դասավանդել վանքի դպրանոցում, եղել դպրապետ: Եկեղեցական գործերով հաճախ շրջագայել է՝ 1675 թ. այցելել է Կաղզվան, 1682թ.՝ Չմյուռնիա, 1684-ին՝ Մկյուտար: 1687թ. արդեն 60-ամյա Չաքարիան ձեռնարկել է շարադրել «Օհանավանքի Սուրբ Ուխտի կոնդակը»՝ «Պատմագրություն» աշխատության երրորդ հատորը: Ի դեպ, հեղինակի հիշատակության համաձայն՝ այս աշխատության առաջին և երկրորդ հատորները նա ավարտել է 1699թ. մայիսի 30-ին: Ըստ պատմագրի հետագա կենսագիրների՝ Չաքարիան նույն տարում էլ կնքել է իր մահկանացուն:

«Պատմագրություն» աշխատության բնագրային տարբերակները պահվում են Երևանի Մատենադարանում.

ա. հեղինակային ձեռագրով, 1699թ. ավարտած բնագիրը, որում ընդգրկված են պատմության առաջին և երկրորդ հատորները (N1662): Այս ձեռագիրն ունի անընթեռնելի հատվածներ, բառեր, կրում է ժամանակի անոդոք ազդեցությունը:

բ. 1791թ. վերագրվող ձեռագիր, որում ամփոփված են երեք հատորները միասին, այն սկսվում է 50 էջից (N3024):

գ. Օհանավանքի Սուրբ Ուխտի կոնդակը՝ պատմության երրորդ հատորը առանձին, որը վերագրվում է 17-րդ դարավերջին (N8636):

դ. 18-րդ դարին վերագրվող կրկին երրորդ հատորը առանձին (N8018) և այլն:

Առաջին անգամ «Պատմագրությունը» հրատարակվել է 1870թ.՝ «Չաքարեայ Սարկավազի Պատմագրություն» վերնագրով՝ ի տպարանի Սրբոյ

Կաթողիկե Էջմիածնի ի Վաղարշապատ, հրամանաւ Տ.Տ. Գեորգեայ Գ. Վեհափառ եւ Սրբազնագոյն Կաթողիկոսի Ամենայն Հայոց: Հրատարակության նախաբանում («Ազգ») նկարագրվում և պարզաբանվում են հեղինակային ձեռագրին առնչվող խնդրահարույց իրողություններ, որոնք էլ «անգերծանելի» և «պակասաթերթ» են դարձրել հրատարակությունը.

Ի հրատարակել մերում՝ զպատմագրութիւնս զայս Սարկավազին Չաքարիայի, զբուն ձեռագիր օրինակ հեղինակին ունէաք ի Մատենադարանի Մայր Աթոռոյ մերոյ Կաթողիկէ Ս. Էջմիածնի, յորմէ գաղափարեցաք զներկայս՝ դոյզն ինչ փոփոխութեամբք կէտադրութեանցն, ուղղութեամբք տառասխալիցն, և յաւելլով ի ստորին լուսանցսն զՀայ. թարգմանութիւնս այլազգի բառից, և ընծայեմք ի վայելս մերոց և օտարաց բանասիրաց:

Ավազ՝ զի Գ-րդ հատորոյ Կոնդակ անուանելոյ ձեռագիր օրինակ հեղինակին չերևի ի միջի, զոր գտաք յայլոց հազիւ զմի օրինակ և եթ, թէ և այն ևս լի պակասութեամբք թերթից: Ի բնագրին Ա. եւ Բ. հատորոց ևս գտանէին պակասութիւնք բառից, որք ի հնութենէն մաշեալ և որք քերեալ գոլով, անզերծանելի մասն:

Յուսամք, զի յերկրորդ տպագրութեան պատմութեանս, եթէ յաջողեացուք ի ձեռս բերել զայլ օրինակս երից հատորոց պատմութեանս, և եթէ ամբողջ ունին նոքա զպակաս թերթս որ ի սմին երևին, լրացուցանեմք զպակասորդս պատմութեանս որ ի տեղիս տեղիս:

1876թ. «Պատմագրությունը» թարգմանվել և հրատարակվել է ֆրանսերեն Մ. Բրոսսեի կողմից (Brosset M., Mémoires historiques sur les Sofis par le diacre Zakaria, Collection d'historiens arméniens, t. II, SPB):

1969թ. տպագրվել է ռուսերեն և լույս տեսել Մոսկվայում (ԻՍՍՐԻՌԻՆ ԽՈՎՈՍԱՎՐՓԻ ՂՐՏՎՈՍՈՆ), Մ. Գարբիյան-Մելիքյանի թարգմանությամբ, առաջաբանով և ծանոթագրություններով:

Աշխարհաբար թարգմանությունը առավել ամբողջական է և ճշգրտված, քանի որ վաստակաշատ հայագետ Վարազ Առաքելյանի կողմից հաշվի է առնված վերը նշված բնագրերի և հրատարակությունների նախորդ փորձն ու զիտական մեկնությունները: